

# ՀԱՐՑԱԶՐՈՅՑ ՏՈՔԹ. ՏԻԳՐԱՆ ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻ ՀԵՏ

*Posted on July 26, 2014 by Keghart*



Category: [Opinions](#)



**Համո Մոսկոֆեան, «Դիտակ», Պէյրուս, 26 Յուլիս 2014**

**Յունիս-Յուլիս ամիսներու ընթացքին Keghart.com-ի հիմնադիր Տոքթ. Տիգրան Աբրահամեան շրջագայեցաւ Հայաստանի, Լիբանանի եւ Իրաքեան Զիւրտիստանի մէջ իր տիկնոջ՝ Շըրլիի հետ: Պէյրուսէն հրաժեշտի օրը արձանագրուած ներքոյիշեալ հարցազրոյցը յապաղումով կը հրատարակենք:**

**Հարցում.- Տոքթ. Աբրահամեան, կարելի՞ է հակիրճ կերպով ներկայացնել «Գեղարդ»ի նպատակը:**

Հանրայայտ իրողութիւն է որ թրքական քարոզչութեան միջոցները կը փորձեն խեղաթիւրել Հայոց Ցեղասպանութեան ճանաչման ետեւիցէն եւ ցեղասպանութեան հետ առնչուած այլ խնդիրներ, ինչպէս այլուր, նմանապէս գանատական մամուլին մէջ: Մօտաւորապէս 7-8 տարի առաջ հնարաւորութիւն ստեղծուեցաւ սկսիլ Keghart.com հրատարակութիւնը:

«Գեղարդ»ի նպատակն էր անգլերէնով բացայայտել այդ թրքական այլանդակութիւնները, բացատրողական մեկնաբանութիւններ հրապարակել ուղղուած ընդհանրապէս ոչ-հայ գանատացի հանրութեան եւ ի մասնաւորի գանատական բարձրագոյն կրթական հաստատութիւններու համալսարաններու դասախօսներուն, բաց աստի՛ անդրադառնալ հայութիւնը յուզող հարցերուն, համամարդկային, ժողովրդավարական արժեքներուն եւ անհատի իրաւունքներուն:

**Հարցում.- Ինչպիսի՞ առաքելութեամբ կը գտնուիք Պէյրուս եւ որո՞նք էին ձեր ծրագիրները Լիբանան-Հայաստան-Իրաքեան Զիւրտիստան այցելութեան վերաբերեալ:**

Առաքելութիւն մը չէ: Շուրջ 40-45 տարիներ կը բաժնեն զիս իմ ծննդավայրէս. պարզապէս կ'ուզէի գալ ու վերամիանալ այն գաղութին հետ, ուր ես մեծցած եմ: Մանկութիւնս, պատանեկութիւնս, երիտասարդական առաջին տարիներս անցուցած եմ հոս: Սկզբնական նախաբժշկական համալսարանական կրթութիւնս ստացած եմ Լիբանանի մէջ: Մեծ գոհունակութիւն էր տեսնել բազմաթիւ ընկերներ, որոնք պատասխանատու դիրքերու վրայ են այսօր: Սակայն ցաւ կը զգամ նկատելով որ գաղութը անդամալուծուած է, հակառակ որ բոլոր կազմակերպութիւններն ալ աշխատանք կը կատարեն այս գաղութը պահպանելու եւ համընդհանուր մտահոգութիւններով տարուած երեւութապէս միացեալ ճակատ կը կազմեն:

Հայրենիքի կապակցութեամբ նշեմ որ մասամբ անձնական-ընտանեկան պարագաներէ մղուած այցելեցի եւ այսօր պիտի վերայցելեմ: Որդիս, որ հայրենիքի մէջ ծնած է, այս տարի աւարտեց նոյն բժշկական ուսումնական հաստատութիւնը, որուն աշակետած եմ ես տարիներ առաջ: Պարզ է, ուրախութեամբ նշեցինք բժշկական վկայականի շնորհումը: Աւելցնեմ որ պարբերաբար այցելած եմ հայրենիքս ուխտաւորի մը նման: Այս առիթով կը փափաքէի մօտէն շփուիլ կարգ մը անձնաւորութիւններու հետ, որոնք իմ համեստ կարծիքովս յառաջիկայ տարիներու ընթացքին ազգային, պետական, կառուցուացքային ոլորտներուն մէջ յառաջխաղացք մը պիտի արձանագրեն: Անուններ պէտք չկայ նշել: Անշուշտ իւրաքանչիւր անհատ իր դերը ունի, սակայն հաւաքականութիւնն է վերջ ի վերջոյ որ իր որոշիչ դրոշմը կը պարտադրէ ապագայի նկատմամբ:

Արդէն իսկ քանի մը տարիներէ ի վեր կը մտածէի այցելել Իրաքեան Զիւրտիստան: Միակ հպանցիկ այցելութիւնս 1969-ին էր: Նորաստեղծ, գրեթէ կիսանկախ Զիւրտիստանը, ինչ մեղքս պահեմ, ոգէւորած էր զիս եւ կարծես Արեւմտեան Հայաստանի ազատագրութեան երազը կը յուշէր: Ա՛յս, հակառակ այն իրողութեան որ այդ միաւորման հիմնադրութեան մէջ արեւմտեան կայսերապաշտութիւնը հիմնական դեր խաղաց՝ համագործակցութեամբ Իսրայէլի:



**Չրոյց՝ Ասորի-Քաղդիացի խորհրդարանական, Իրաքեան Զիւրտիստանի քաղաքական դէմք՝ Սեյիմ Թումա Գագոյի հետ**

Կը սպասէի շարժառիթի մը: Դժբախտաբար Յունիս 10-ի գոյժը՝ Մուսուլի գրաւումը ծայրահեղ ապամարդկային հրոսակներուն կողմէ վճռեց մեկնումս դէպի Երպիլ, նպատակ ունենալով անձնապէս իրազէ կողմէն դառնալու եղելութեան եւ հանդիպելու գաղթական հայ ընտանիքներուն:

**Հարցում.- Ինչպէ՞ս կը տեսնէք Ձեր համագործակցութիւնը Սփիւռքի երբեմնի մայրաքաղաքին հետ: Հայոց Ցեղասպանութեան 100-ամեակի սեմին՝ հայուրթիւնը պատրաստ է:**

Ձեր մատը վերջին վրայ դրիք Պրն. Մուսկոֆեան: Այդ հարցը կը յուզէ շատերս: Հայրենիքի թէ Սփիւռքի մէջ տարօրինակ եռուզեռ մը կայ. երկխօսութիւն թրքական պետութեան հետ, երկխօսութիւն երեւելի թուրք անձնաւորութիւններու եւ թրքական կազմակերպութիւններու հետ: Ես կ'ուզեմ ընդգծել այն պարագան, որ անցեալին եւս տեղի ունեցան այդպիսի երկխօսութիւններ... Եւ ի՞նչ արդիւնքի հասան անոնք...: Հարիւրամեակ մը առաջ էին, եւ «աչքի փոշի» ցանեցին ...:

Կ'ըսուի թէ մեր թշնամի երկրին տնտեսական, քաղաքական կացութիւնը փոխուած է եւ կարելի է արդիւնաւետ երկխօսութիւն մը իրագործել: Ճիշդ է, այնտեղ այժմ կայ յառաջդիմական մտաւորականութիւն, այնտեղ կայ քրտական շարժումը եւ կան նաեւ բազմաթիւ անհատներ, որոնք կ'ընդունին իրենց հայ ըլլալը եւ հետեւաբար՝ այս երեք գործօնները կրնան դրական անդրադարձ մը ունենալ մեր ընդհանուր երազներուն եւ նպատակներուն վրայ:

Ես կ'ուզեմ բաղդատական մը ընել թուրք մտաւորականներու հետ տեսակցութեանց եւ քիւրտ ժողովուրդի ներկայացուցիչներու նկատմամբ ցուցաբերուած վերաբերմունքին միջեւ ... շատ ճղճիմ աշխատանք մըն է որ առ այժմ տարուած է եւ տակաւին նոյնը կը շարունակուի, հակառակ այն իրողութեան եւ պատմական փաստերուն, որ շարք մը քիւրտ ղեկավարներ եւ աշիրեթներ, օգտակար եղած են պահպանելով մեզի քիւրտ անուան տակ: Դժբախտաբար, այդ երկխօսութիւնը ժլատ վիճակի մէջ է: Կը կարծեմ թէ շատ անելի արդիւնաւետ կ'ըլլար քիւրտերու հետ՝ քան թէ թուրք կառավարութեան ներկայացուցիչներուն հետ բանակցիլ, յատկապէս Ցեղասպանութեան 100-ամեակի սեմին:

**Հարցում.- Ձեր այցելութեան աւարտին, երբ վերադառնաք Գանատա, ի՞նչ կ'ուզէք փոխանցել Լիբանանի հայուրթեան:**

Կ'ուզեմ վերադառնալ երկխօսութիւններուն: Շնորհիւ ձեզի, Պրն. Մուսկոֆեան, առիթը ունեցայ

հանդիպումներ ունենալու հրաքեան Քիւրտիստանի կարգ մը անձնատուրութիւններու հետ՝ որոնք համար կը խնդրեմ որ ընդունիք շնորհակալութիւններս: Այնտեղ՝ քաղաքական, աշխարհագրական, իմացական, գաղափարական իմաստով քիւրտերը կը տարբերին Թուրքիոյ մէջ պայքարող իրենց ցեղակիցներէն, որոնք զէն ի ձեռին կը շարունակեն պայքարիլ: Այսուհանդերձ, հրաքի քիւրտերը, բաղկացուցիչ մէկ մասն են ընդհանուր ժողովուրդին: Կ'ենթադրեմ, որ մեր հանդիպումները Քիւրտիստանի մէջ դրական արդիւնքներ կրնան ընձեռել, եւ լիբանանահայութիւնը այս կապակցութեամբ կրնայ որոշիչ դեր կատարել:

Լիբանանահայութիւնը ցնցիչ օրեր անցուց, մնալով միջոց պատնէշին վրայ: Միշտ եղաւ այն գաղութը, որ կրցաւ ուղիներ սահմանել ոչ միայն Լիբանանի մէջ, այլեւ Սփիւռքի տարածքին: Իմ մաղթանքս է այն, որ հիմնահարցերու կապակցութեամբ ազգային գործիչները, մտաւորականները ճիգ չիսնայեն որոնելու, շեշտելու հասարակաց եզրերը եւ համախմբուելու, անկախ այն հարցէն թէ ինչ ուղղութիւն ունին, կամ որ կազմակերպութեան ու կուսակցութեան կը պատկանին:



**Հանդիպում հրաքեան Քիւրտիստանի կրօնի եւ նուիրաբերութեանց նախարարութեան՝ եզիտական հարցերու  
ղեկավար, Խեյրի Պօզանիի հետ**

**S. Աբրահամեան, Խեյրի Պօզանի և Հ. Մուկոֆեան (Ձ-Ա)**

Տարածաշրջանին մէջ, գաղութատիրական եւ կայսերապաշտական ուժերու գործունեութիւնը, արաբական զարթօնքի վերիվայրումները, կրօնի անուամբ գործադրուող բարբարոսութիւնները մարտահրաւերներ են: Դժբախտաբար՝ անցեալին, մեր կարգ մը կազմակերպութիւնները չկրցան ճիշդ գնահատել պատմա-քաղաքական իրադարձութիւնները եւ ըստ այնմ կողմնորոշուիլ: Յուսամ այդ սխալը չենք կրկներ:

